

<http://www.lragir.am/armsrc/pubcorr50138.html>

Տավուշը այլընտրանքային էներգետիկայի զարգացման ներուժ ունի

Հանրապետությունում ուսումնասիրությունները պարզել են, որ Տավուշի մարզում կա վերականգնվող էներգիայի մեծ ներուժ, այդ թվում՝ արեւային էներգիայի. այստեղ 1 քմ հորիզոնական մակերեւույթի վրա տարեկան արեգակնային էներգիայի ճառագայթումը հասնում է 1500 կՎտ/ժ, որը էլեկտրական էներգիայի վերածելու դեպքում կստացվի տարեկան 1 քմ հորիզոնական մակերեւույթից՝ մոտ 220 կՎտ/ժ էլեկտրաէներգիա:

Այս մասին Տավուշի մարզպետարանում Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության (ՎԷԷ) հիմնադրամի նախաձեռնած հանդիպում-քննարկման ժամանակ ներկայացրեց հիմնադրամի տնօրեն Թամարա Բաբայանը: Նա նշեց, որ Տավուշի մարզը վերականգնվող էներգետիկայի զարգացման հեռանկարներ ունի:

Տավուշի մարզում որոշակի փորձեր են արվել նաեւ կենսազանգվածի էներգիայի արտադրության ոլորտում: Մասնավորապես, միջազգային կազմակերպությունների աջակցությամբ մի քանի ծրագրեր են իրականացվել գոմաղբից մեթան գազի ստացման ուղղությամբ:

Հիմնադրամի ներկայացուցիչները նաեւ նշեցին, որ ՀԷԿ-երի չյուրացված առավելագույն ներուժը նույնպես դիտվում է հենց Տավուշի մարզում, որտեղ շահագործվող փոքր ՀԷԿ-երի քանակը կարելի է մեծացնել:

Հայաստանի վերականգնվող էներգետիկայի եւ էներգախնայողության հիմնադրամի կողմից թարմացված “Փոքր ՀԷԿ-երի զարգացման սխեմայի” համաձայն՝ Աղստեւ գետի վրա հնարավոր է շահագործել 20-ից ավելի փոքր ՀԷԿ-եր:

Գազիկ Աղբալյան, Իջեւան